



ՀՀ ՍՓՅՈՒՌՈՒՔԻ ՆԱԽԱՐԱՐ
ՄԵԾԱՐԳՈՍՏԻՎՈՒՄԻ ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒՅԱՆ

Սյունիքի մարզի Դավիթբեկ գյուղի մանկավարժական, աշակերտական և ծնողական կոլեկտիվների անունից մեր խորին Շնորհակալությունն ենք հայտնում Ձեզ՝ Գարեգին Նժդեհի 125- ամյակին նվիրված մեր միջոցառմանը ոգի և շունչ տալու համար, մասնակից դարձնելով Ձեր ներկայացուցչին մեր միջոցառմանը:

Հեռավոր գյուղերից մեկի բնակիչը, ուսուցիչն ու երեխան, որ շատ հարցերում իրեն լքված ու արհամարված էր զգում, այդ օրը ջերմության և հոգատարության զգացում ապրեց: Իսկ միջոցառման թեման ավելի խոսուն էր, կազմակերպված, հագեցված բացառիկ և հարուստ նյութերով:

Առանձնահատուկ և արժանավույն գնահատվեց Ափյուռքի նախարարության այն մեծածավալ աշխատանքները, որ կատարվում է Ձեր գլխավորությամբ: Ոգևորվում են, տեսնելով աշխարհի տարբեր անկյուններում սփռված ողջ հայության համագործակցված և հաղթանակներով լի միջոցառումները:

Քաջածանոթ լինելով Ձեր բեղմնավոր աշխատանքային կենսագրությանը՝ հպարտանում ենք, որ կաք, այսօր օժտված եք առավել էներգիայով, վարակելով նայել շրջապատին:

Միաժամանակ մենք էլ կցանկանանք մասնակցել <<Քույր դպրոցներ>> ծրագրին, կապ ստեղծել Սփյուռքի համայնքների կրթօջախների հետ, ծանոթանալ հեռավոր՝ բայց սրտամոտ մեր բույրերին ու եղբայրներին, և որ կարևոր է՝ հրավիրել նրանց պատմական Չազեզուր՝ Սյունիք, ուր, Խուստուփի գագաթին Մեծն Նժդեհի սուրբ մասունքներն են:

ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՆԿԵՂԾ ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝
Սյունիքի մարզի Դավիթբեկի միջնակարգ դպրոցի մանկավարժական, աշակերտական և ծնողական կոլեկտիվ.

Դպրոցի տնօրեն՝  Գ. Հ. Գաբրիելյան

